ՆՈՐ-ԴԱՐ

№ 30 ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հ_ապաթ, 20 փետրուարի — 1893 — Հ_ապաթ, 20 փետրուարի, ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 30

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատուկ՝ 5 կոպէկ։
Բոլ ժանրդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաին 2 կ., տեկստներին համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—«Վէրք Հայաստանի»-ի երեսուն հինգամեակը։

Քրոնիկոն.—Դատարանական վերանորոգութեան քսանհինգ ամեակը։ Հ. կան. բաբ. ընկերութեան պատահանդէսի հանդէսը։ Հոգաբարձական ընտրութիւն Զիգրաշէնում։ Պաշտօնանկ Սահակեան Սարկաւագը «Խան Միրան» և Դրախտի ընտանիք»։ Սամուէլ Անենցոյ պատմութիւնը։ Սոկրատի պատմութեան ձեռագիրը։ Ախալցխայ, Բագուից, Կարգանլից, Զմեռը Պոլսում, Տղերքների մօտ երկաթուղու գծի բանդագրւում։ Ելևէջից։ «Սկիզբն երկանց»։

Կրթական գործը Նուխու վիճակում։

Թղթակցութիւններ. — Թէհրան։ Կիրճաւան։ Ելևէջ։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր.

Խառն լուրեր։

Հեռագիրներ։

Բանաստեղծական. — Բնաւորութեան հերոսութիւնը, քաջութիւնը, արժանաւորութիւնը և վեհանձնութիւնը։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 19 փետրուարի, 1893 թ.

«ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ի ԵՐԵՍՈՒՆ-ՀԻՆԳԱՄԵԱԿԸ.

—

Երեսուն և հինգ տարի առաջ՝ 1858 թուին Ներսիսեան դպրանոցի տպարանից լոյս տեսաւ մի գիրք, որը իւր մէջ ամփոփած մրաքերի խորութեամբը և վսեմ զգացմունքների ուժովն անդրանիկ տեղ է բռնում մեր վիպական գրականութեան մէջ։ Ո՛չ մի գիրք այնքան չէ ազդեցրել հայ մարդու, ո՛չ մի գիրք այնքան վեհ զգացմունքներ, այնքան ազնիւ խորհուրդներ ու մտքեր չէ տուել հայ երիտասարդին, որքան այդ գիրքը։ Դա մեր գրականութեան արշալոյսն է կազմում թէ իւր պարզ ձևով, և թէ հարուստ, սրտի խորքից բղխած բովանդակութեամբը։

«Վէրք Հայաստանին» է դա։

«Վերեզմանը կոտած, հողի մէջ թաղուած» անմահ Խաչատուր Աբովեանի «Ողբ Հայրենսիրի» պատմական վէպն է դա։

Ո՛վ չէ յիշում այն քաղցր րոպէները, երբ մեր սրտերի խորքից դառն հառաչ էր բարձրանում, երբ աղի արտասուքից խեղդուած՝ անկարող էինք լինում անընդհատ շարունակել վէպի ընթերցումը, երբ զօրեղ տպաւորուած հոգին կաշկանդում էր մեր ամբողջ էութիւնը, երբ մեկը միւսից քաղցր և սիրելի առարկաները, ցօղուած հայրենասիրի արտասուքով, անցնում էին մեր աչքի առաջից։

Հազիւ թէ երիտասարդի, նոյն իսկ հասակաւորի լիշողութիւնից անցած լինեն այդ առարկաները, հազիւ թէ «Վէրք Հայաստանին» մի անգամ գոնէ կարդացողի մրաքից՝ գուրս եկած լինի Աղասին։

Աբովեանը իւր «Վէրք Հայաստանի» պատմական վէպով մեր նոր գրականութեան զօրեղ հիմքը դրեց։ Գրաբար լեզուն իւր բոնի ոյժի տակ ճնշել էր և՛ կրթութիւնն և՛ դաստիարակութիւնն և՛ գրականութիւնն։ Այդ բռնութեան դէմ առաջին և ամենազօրեղ բողոքողն էր Խաչատուր Աբովեանը իւր «Վէրք Հայաստանի» պատմական վէպով։

Ո՛վ էր, որ առաջին անգամ մի սրտալի բան ասաց Հայ մարդուն։

Ո՛վ էր, որ առաջին անգամ գեհկական համարուած, արհամարհած աշխարհիկ լեզուն այնքան բարձրացրեց, և նրանով ուժեղ մտքեր և խորը զգացմունքներ յայտնեց։

—Խաչատուր Աբովեանը.

Ո՛վ գցեց այն կամուրջը, որով յաջողութեամբ անցան վարժատունական թուականների գործիչները։

—Խաչատուր Աբովեանը։

Եւ ով է կորած, մոռացուած, ժառանգների կողմից աչքին երախտագիտութեան չարժանացած, եթէ ոչ—Աբովեանը։

—Ադնիւ տղամարդը քրտնաժոր աշխատեց, հերկեց, սերմեց Հայի մտաւոր անդաստանը։

Պտուղը ուրիշները քաղեցին, ինքը ոչինչ չտեսաւ։

Ներկայ 1893 թ. երբ լրանում է Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպի տպագրութեան երեսուն և հինգամեակը, մենք պէտք է յիշենք այդ մեծ մարդուն, այդ մեծ Հայրենասիրին։

Ոչ մեկ հայ գործիչ այնքան մօտիկ չէ մեր սրտին և մեր մտքին, որքան Խաչատուր Աբովեանը՝ հոգևով և սրտով և իւր ամբողջ էութեամբ Հայը և «Նոր-Դար»-ի մեծ Հայրը։

Ինչպէս չըլիշենք «Ողբ Հայրենասէրի» հեղինակին, ինչպէս չը լիշենք Աղասու ստեղծողին, Զանգուի բլբուլին։

Ամենահասարակ երախտագիտական զգացումը պարտաւորեցնում է յարգելու Խաչատուր Աբովեանի յիշատակը։ պէտք է նրա յիշատակին մի արձան կանգնեցնել Երևանի ւագ եկեղեցու գաւթում, Զանգուի մօտ, Մասիսի դիմացը, այնտեղ, որտեղ նա իբրև ուսուցիչ գործել է և իբրև Հայ մարդ՝ գրել, յօրինել, գգացել և ոգևորուել է։ Պէտք է, որ այդ երեսուն հինգամեակի առիթիւ Հրատարակուին նրա աշխատութիւնների ժողովածուն։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ինչպէս որ կանխաւ յայտնել էինք, դատարանական վերանորոգութեան քսան և հինգ ամեակի առիթիւ փետր. 19-ին, ուրբաթ ժամը 12-ին, Թիֆլիսի դատարանական պալատի դահլիճում կատարուեցաւ հոգեհանգիստ և սէր հանդուցեալ Ալէքսանդր Բ. Կայսրի համար և կենաց մաղթանք՝ Թագաւոր Կայսրի և Կայսերական տան համար։

Թէ դատարանական պալատը և թէ հանդիսի դահլիճը զարդարուած էին պըօշակներով. դահլիճում ներկայ էին պաշտօնական բարձր անձինք, վարչական, դատարանական և զինուորական բարձր պաշտօնեաները, քաղաքի ներկայացուցիչները, ինչպէս և տեղական մամուլի գլխաւոր ներկայացուցիչները, նոյնպէս և հայոց, կաթոլիկների և մահմեդականների հոգևոր ներկայացուցիչները։

Կառավարչապետի փոխարէն ներկայ էր նրա օգնական՝ գլուխ Տատիշչևը, Թիֆլիսի պ. նահանգապետը, Թիֆլիսի կամենդանտ՝ զօրապետ՝ Էբնեետը, զօրքի հրամանատար՝ լէյտենանտ—զօրապետ Ամիլախուարլին, լէյտենանտ—զօրապետ Չաւչավաձէն, Կովկասեան գալուոնների հոգաբարձու՝ պ. Եանովսկին, ազնուականների առաջնորդ՝ կամերգեր՝ Մալալովը և այլ բարձրաստիճան և պաշտօնական անձեր։

Ներկայքը բացակայ էր։ Հոգեհանգիստը և մաղթանքը տեղի ունեցաւ մօտ ½ ի ժամ և այնուհետև ներկայ գտնուողները միմեանց շնորհաւորեցին դատական քան և հինգ ամեակը։

Այդ օրուայ առնի առթիւ հայկերոյթ կար։

—

Հայ կանանց բարեգործ. ընկ. ը. վարչութիւնը յայտնում է մեզ, որ անցեալ յունուարի 10-ին Թիֆլիսի ժողովարանում ընկերութեան օգտին կազմած պարահանդէսի տոմսակներից, նուէրներից գոյացել է 1474 րուբլի և 8 կ., ծախս եղել 274 ր. 8 կ., զուտ արդիւնք մնացել է 1200 ր.։

—

Ս. Աւետեաց (Ջիգրաշէնի) եկեղեցու գաւթի հոգաբարձական ընտրութիւնն անվաւեր համարուելով կիրակի, ամսոյս 20-ին նշանակուած է վերընտրութիւն։

—

Մենք կարդում ենք Աբարատի մէջ հետևեալ դատավճիռը ճեմարանաւարտ սարկաւագներից մէկի վրայ. «Նորին Ամենապատուութիւն Տէր-Տեղակալն Հայրապետութեան ամենայն հայոց՝ ի նկատի առնելով Սահակեան սարկաւագ Տէր-Յովհաննէսեանցի անուղղի և իւր կոչման պատիւ չբերող ընթացքը, արձակեց նրան Էջմիածնի Միաբանակցութիւնից, զրկելով միանգամայն ուրոյն կրելուց»։

—

Աբարատի անցեալ ամսուայ տետրակից Նրա մէջ մաել է մի նոր էջ «Դրախտութիւն» խորագրով, որի տակ ամփոփած են գրքերի ցուցակ։ Կարգացինք օրինակ արդէն «Նոր-Դար»-ի ընթերցողներին յայտնի «Խան Միրանի», համառօտ գովաբանական ճառը, ի հարկ է չգարմացանք դրա վրայ, բայց գարմացանք այն բանի վրայ, որ «Խան Միրանի» մօտ դրուած է և Հայրենիկի «Դրախտի ընտանիքի» անունը, որի բովանդակութիւնը նոյնպէս յայտնի է բոլորիս։ Այս գրախոսութիւնը ստորագրող պ. Ֆ. երևի ժամանակ չի ունեցել «Խան-Միրանը» կարդալուց յետոյ «Դրախտի ընտանիքն» էլ կարդալու և համեմատելու։

—

Աբարատի յունուար ամսուայ տետրակում կարդում ենք հետևեալը.—«Այս տարուայ սկզբից յանձնուեց արքունի պաշտօնեաներ Սամուէլ քահանայ Անենցոյ պատմութիւնը, համեմատութեամբ մի քանի ձեռագրերի։ Սամուէլ Անենցոյ պատմութեան համեմատողն և ծանօթութեամբ լուսաբանողն է Ձեմարանի Ատուածարանութեան ուսուցիչը»։

—

Նոյն տետրակից իմանում ենք, որ «Սոկրատի պատմութեան ամենաչիշ ընդարձակ թարգմանութեան ձեռագիրը համեմատութեամբ բնագրի հետ տպագրութեան է յանձնուած»։ Այս բնագրողն է պ. Փարսադան Տէր-Մովսիսեանը։

—

ԱՍԽԱՐԱԴԻՑ.—Այստեղ էլ չարագործութիւններ են յայտնուում։ Փետր. 7-ին գիշերը անյայտ չարագործները մանում են մի հայի խանութ և նրան քնած տեղը սպանում։ Առաւօտը զբացինները տեսնում են, որ խանութը չի բացուում, կասկածը պաշարում է դրանց, հետևելով գործին տեսնում են, որ խանութի տակը փորած է և խանութատէրը 37 տեղից վիրաւորած սպանուած է։ Չարագործները խանութի մէջ ոչ մի բանի ձեռք չեն տուել։

—

ԲԱԳՈՒԻՑ Մի երեսուն տարեգրութեամբ մեզ մի նամակ են ուղարկել, որի մէջ չնորհակալութիւն է յայտնուում Թեմի ս. առաջնորդ՝ Մեսրովբ Արքեպիսկոպոսին, Տաղերը քահանաների մէջ բաժանելու համար։

Վկաղուց է որ Բագուի հայ հասարակութեանը զրաղեցնում է ծխաբաժանութեան խնդիրը։ Բայց ինչ հարկաւոր է այդ բաժանումը և ինչպէս է բաժանուել, մեզ յայտնի չէ։

—

ԿԱՐՋԱԽԻՑ (Ախալքալաքի գաւ.).—Մեզ գրում են, որ այնտեղ երևացող խոլերային զոհ գնաց մինչև 30 մարդ։ Այժմ խոլերան այդտեղ, որպէս և ուրիշ տեղեր, վերջացած է. բայց ցանկալի կլինէր, որ վաղօրօք ուշադրութիւն դարձնուէր վիւղերում մաքրութեան վրայ, քանի որ գիւղացին ազատ է պաշտպանել պարապմունքներից։

—

Լրագրներին նայելով Պօլսում սարսափելի յուրտ ձմեռ է։ Ոչ մի ժամանակ չսառած Ոսկեղջիւրը՝ սառոյցով ծածկուել է մինչև Գալաթիան. այնպէս որ մեկ ափից մինչև միւս ափը սառոյցի վրայ ոտով են գնում։ Քաղցած գայլերի վոհմակները մօտիկ անտառներից օրը ցերեկով նետուում են Թափուում տները և պատառոտում պատահած մարդուն և կենդանուն։ Քաղաքի հասարակական կեանքը մատած է. ամեն մարդ իւր տունն է քաշուել և ցրտից ամուր ծածկուել։ Թատրոնները և ցրուից ամուր ծածկուել։ Թատրոնները և այգիները յայտնուեցաւ և այնպէս տաք տեղերում, ինչպէս են Տոնջի՝ և Մարիցի գետերի հովիտներում։ Բնակիչների մէջ սկսուել է կռիւ հացի և վառելիքի համար։

—

«Кав.»-ին հաղորդում են, որ Տղերքի կայարանի երկաթգծի մօտ փետրուարի 14-ին Հանապարհի լայնութեամբ, անձրև գալու պատճառով, ընկած է հողի մի մեծ կոյտ, որ երեք Հանապարհը խանգարուած է և երկաթուղիների յարաբերութիւնը դադարած։ Այդ կոյտը մաքրել են փետրուարի 16-ին։

—

ԵԼԵՎԷՋԻՑ.—Ելևէջն սկսել է արդէն կենդանութիւն ստանալ։ Մատուտակի արմատը մեծ դեր է խաղում այստեղ։ Անցեալ 1892 թուականին մօտ 200 վագոն մատուտակի արմատ է արտահանուել։ Այս տարի էլ սկսել են գնել այդ արմատը։ Մեծ քանակութեամբ առնում է անցեալ տարուայ յոյն ընկերութիւնը, համարեա, Չիւանդիրի գաւառում ամեն տեղ էլ մարդիկ ուեն։ Բացի այդ, մի քանի վաճառականները էլ սկսել են արտահանել ուրիշ կերպ։ Օրինակ. անցեալ տարի ես իմ մի թղթակցութեան մէջ յիշել էի, որ բացի սև արմատից, որ աւելի մեծ քանակութեամբ է արտահանուում, սկսել են գնել և փերած արմատը։ Այս տարի բացի փերածից գնում են և զանազան չափերով կտրտած ուղիղ արմատ։ Այդ տեսակ արմատներից ամենաերկարը լինում է մօտ 50 սանտիմ։ Այդ բոլոր արմատները արտահանում են Ֆրանսիա։ Ինչպէս երևում է, մատուտակի արմատը տեղիս արդիւնաբերութեան մէջ մեծ առաջադիմութիւն կ'ունենայ, որին նպաստում է նրա առատութիւնը։

Եղանակները կատարեալ գարնանային են. այս տարի Կուր գետի յորդութիւնից մեծ երկիւղ է սպառնում։

Այսօր առաւօտեան երկու հայ երիտասարդ Գանձակ գնալու համար տոմսակ առնելու ժամանակ բռնուում են։ Պատճառն այն է, որ նրանք կասկերին տուել են մի հատ կեղծ երկու րուբլիանոց, որի մասին իմանալով կայարանի կազգատակ ժանդարմը՝ խնդրն ձերբակալում է։

—

Ստացանք մեզ յայտնի վիպասան Պերճ Պռոշեանցից իւր «Սկիզբն երկանց» վէպը, որ անցեալ 1892 թուին տպուում էր։ Այդ գիրքը նուիրում է Ներսիսեան դպրանոցում հեղինակի մօտ, որի գինն է՝ 1 ր. 20 կ. առանց Հանապարհածախքի։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՆՈՒԽՈՒ ՎԻՃԱԿՈՒՄ

—

Նուխու վիճակի կրթական գործի ամփոփ տեսութիւնն թողնելով աւելի ձեռնհաս անձանց, մենք միայն ցանկանում ենք այժմեան դրութիւնն կարճառօտ նկարագրել։

Քաղաքիս մէջ և վաղուց գոյութիւն ունին մի քաղաքային դպրոց և երկսեռ հայոց եկեղեցական-ծխական դպրոցներ։ Քաղաքային դպրոցի աշակերտների թիւն է 140, որոնց մեծամասնութիւնն հայեր լինելով, չնչին %-ը կազմում է թուրք տղերը։ Երկսեռ դպրոցների աշակերտների և աշակերտուհիների թիւն է 340։ Մի ռուսաց գիւղական եկեղեցական դպրոց ևս կայ քաղաքիցս մօտ 4 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Կոլմուխ գիւղում, որի բնակիչներն մահմեդական լինելով, դպրոցի գոյութիւնն պահպանելու համար, ինչպէս պատմում են, մի քանի աշակերտներ են յաճախում։ Նուխու վիճակի հայաբնակ գիւղերի թիւը աւելի քան լի-

սուն լինելով, մի երկու տարի առաջ գոյութիւն ունէր Թուռվ փչ եկեղեցական-ծխական դպրոցներ։ Այդ դպրոցներից հինգը բացուել են Նուխու նախկին յաջորդներ՝ գեր. Ղ. վ. Սաթունեանցի և Վ. վ. Տէր-Գրիգորեանցի նախաձեռնութեամբ։ Ցիշեալ դպրոցներից ներկայ. ուսում. տարում միայն երկուսը իրենց գոյութիւնը մի կերպ շարունակում են։ Այդ Վարդաշէն և Ղայաթաղի գիւղերի դպրոցներն են։

Այն ինչ Ուտիախաս Նիժի, Թրքախաս Սոլթան-Նուխու, Բեգլերքենդի և Ամիրուանի դպրոցներն մի-երկու տարի առաջ են փակուել, չնայելով, որ դրանցից վերջին երեք գիւղերի դպրոցներն տարեկան իւրաքանչիւրն երկու հարիւրական ր. նպաստ էին ստանում Բագուայ հայոց մարդասիրական ընկերութիւնից։ Տարեկան մի հարիւրական րուբլի ևս Վարդաշէնի դպրոցն է ստանում, ինչպէս տեսնում էք, փակւում են այն դպրոցները, որոնք տարեկան երկու հարիւրական րուբլի կողմնակի նպաստ են ստանում, փակւում է այն դպրոցը, որի բազմամարդ և հարուստ ժողովուրդը ոչ թէ մի, այլ մի քանի դպրոցների գոյութիւնն առանց մի որ և է զգալի նեղութեան կարող է պահպանել։ Այժ, Ուտիախաս Նիժ գիւղում, որը մատուռաւէս ոչ հարիւր տուն է համարւում, կան այնպիսի հարուստներ, որոնք մի այնտակ, իրենց սեփական միջոցներով, կարող են մի դպրոց պահպանել, իսկ հաւաքական ուժով մինչև անգամ մի միջնակարգ դպրոց կարող են բանալ, բայց այսօր մի դասեան դպրոցի դռները փակուած են։ Ինչու։ Ահա ուշադրութեան և լուսաբանութեան արժանի մի հարց։ Ձմռանանք յարակցել, որ Նիժ գիւղն ունի մի գեղեցիկ քարաշէն նորակառոյց դպրոց երկդասեան իւրաւունքով։ Ցիշեալ դպրոցների փակման չարժառիթը գիւղացիներից ոմանք բացատրում են նրանով, որ ուսուցիչները չեն դանում, իսկ ոմանք վերագրում են, այն հանգամանքին, որ իրենք տգէտ լինելով մնացել են անտէր անտերունչ, իրենց համար հոգացող չկայ, դպրոցների վերակաւարներն այնպիսի մարդիկ են, որոնք իրենց շահերին և անզուսպ կրքերին յագուրդ տալու համար՝ ամեն տեսակ խարդախութիւն գործ դնելով վերջ ի վերջոյ պատճառ են դառնում դպրոցների փակուելուն։ Իսկ սակաւաթիւ բարեխիղճ և դպրոցական գործին փոքր ի շատէ տեղեակ անձնաւորութիւնները էլ չար մարդկանց խարդախութիւններից իրենց զերծ պահելու համար, միանգամայն իրենց հեռու են պահում դպրոցական գործերից և իրենց որդիքն ուսուցանելու համար ուղարկում են Նուխու երկսեռ քաղաքային դպրոցները։ Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թէ տգէտ գիւղացիք որչափ են ըմբռնում ուսման կարիքն, այդ մասին մենք հետամուտ լինելով, այն համոզման ենք հասել, որ նրանք պատրաստ են իրենց վերջին կոպէկին ու բերանի «թիքան» տալու, գէթ իրենց որդիքն փոքր ի շատէ կարդալ գրել իմանան, ուսումն առնեն, չմնան իրենց պէս տգէտ և վայրենի։ Մենք մինչև հիմա այնպէս էինք կարծում, որ միայն գաւառական քաղաքների դպրոցների դեկավարներն են, որ սակաւ բացառութեամբ, իրենց կոչման անհամապատասխան լինելով ոչ մի կապ և առնչութիւն չունին դպրոցական գործի հետ բացի խնամեական ոգուց, բայց ուսումնասիրելով գիւղական դպրոցների դեկավարներին, այդ հոգաբարձու անուն կրող արատաններին, սարսափում ենք։ Ամենայն իրաւամբ կարող ենք ասել, որ գիւղական դպրոցների բաղդի անիւը գտնուում է այժմ մեծ մասամբ պաշտօնաթող, տգէտ և կաշառակեր տանուտէրների ձեռքում, որոնք դպրոցը վաճառատուն են համարում։ Ահա դպրոցների փակման չարժառիթն որտեղ պէտք է որոնել, թէ ինչու կրթական գործը Նուխու վիճակուժ փոխանակ յառաջադիմելու, բարգաւաճելու, յետադիմում է։ Եթէ ուզում ենք կրթական գործը առաջ տանել և հասցնել հիման վրայ դնել, պէտք է փոփոխութեան ենթարկենք մի քանի յարգիերը, որոնք ընդունուած են մեր դպրոցներում և առանձին ուշք դարձնենք դպրոցի դեկը ձեռք առնող մարդկանց վրայ, որպէս զի մեր դպրոցները տգէտների և շահասէրների ձեռք չընկնելով մեր մանուկները չըմնան առանց ուսման։

Նուխի. ***

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ 12 յունուարի. — Թիֆլիսի Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան ներկայ հոգաբարձութիւնը, որի դէմ Ս. ստորագրութեամբ մի յօդուած կար «Նոր-Դար»-ի 196 թուի մէջ, պարտականութիւն է համարում այդ յօդուածագրի հաղորդածները ջրելու՝ գրելով իրողութիւնները ինչպէս են, և եղել են։

Պարոն Ս. իւր յարձակումների մասնաւոր առարկան է դարձրել հոգաբարձութեանս ատենապետ և ազգային դպրոցների տեսուչ Յովհաննէս Խան Մասեհեանցին։

Տեսչի ընտրութեան մասին պարոնը երևի անտեղեակ է, կամ այդպէս է ձևանում, կանոնադրութեան 36-րդ. յօդուածի, համեմատ տեսուչը ընտրում է ոչ թէ ժողովրդից կամ ընկերութեան ընդհանուր ժողովից. այլ ուղղակի հոգաբարձական ժողովից, ուստի Յովհաննէս Խան-Մասեհեանցը գործադիր ժողովի 1892 յունուար 12 ընդ № 2 արձանագրութեան համաձայն և կանոնադրութեան 36-րդ յօդուածի հիման վրայ տեսուչ ընտրուեց, երբ բժիշկ Բարսեղեանը իւր անձնական գործերի պատճառով այլ ևս չկարողացաւ վարել այդ պաշտօնը, և ոչ թէ տեսչութիւնը խլեց նրա ձեռքից։

Դալով պարոն Մասեհեանցի ատենապետ լինելու խնդրին, այստեղ նոյնպէս յօդուածագիրը սխալւում է, կանոնադրութեան 10-րդ. յօդուածի համաձայն, ատենապետը ընտրւում է ոչ թէ ժողովրդի կողմից, այլ գործադիր ժողովի՝ իւր միջից։ Երբ պարոն Ս. 8 ապրիլ 1892. № 8 նիստի մէջ ներկայացրեց իւր հրաժարականը նրա ներկայութեամբ և գործադիր ժողովի ներկայութեամբ ատենապետ ընտրուեց Յովհաննէսեան Մասեհեանցը։

Պարոն Ս. յառաջ տանելով իւր խօսքը, ասում է, հոգաբարձութեանս ներկայ ատենապետի պաշտօնավարութեան ժամանակ պաշտօնից հեռացրել են 8—10 ուսուցիչներ։ Վերոյիշեալ ժամանակամիջոցում երկու ուսուցիչ միայն (մէկ վարժապետ և մէկ վարժուհի) հեռացուել են ուսումնարանից, և այս ոչխարումն էլ վարժուհին հեռացնելու ոչ մի փափագ չունէր հոգաբարձութիւնը և պիտի չարունակէր պահել նրան պաշտօնի մէջ, եթէ այդ վարժուհին վերոյիշեալ վարժապետի ամուսինը չլինէր, իսկ թէ ինչ պատճառի համար հոգաբարձութիւնը պարտաւորուեց հրաժարեցնել վարժապետին, այդ մասին դեռ հոգաբարձութիւնը յարմար է դատում լռութիւն պահել, մինչև որ բոլորովին պարտաւորուի այդ դէպքն առաջ բերող անախորժ հանգամանքները հրատարակութեան տալ։

Իսկ գալով այն կէտին, որով պարոն Ս. ուզում է այնպէս հասկացնել ընթերցողին, թէ ատենապետը հեռացրել է այս ուսուցիչներին անձնական օխի պատճառաւ, այսքանս բաւական ապացոյց է՝ որ երբ այդ վերոյիշեալ ուսուցիչները գործադիր ժողովի մեծամասն հաւանութեամբ հեռացուեցան պաշտօնից, պարոն Մասեհեանցը երկու անգամ ժողովի մէջ ջերմ պաշտպան հանդիսացաւ այն խնդրին, որ նրանց պէտք է հանապարհածախք վճարել, և միայն ժողովի մեծամասնութեան (?) միամտին (!) մերժման առաջ պարտաւորուեց տեղի տալ, ինչպէս հաստատում են ժողովիս արձանագրութիւնքը։

Ցօդուածի մէջ կայ և մէկ ուրիշ կէտ, որ բաւական կասկածելի է դարձընում նրա Թիֆլիսից գրուած լինելը, այն է ուսումնարանի բացուելու թուականը. եթէ իսկապէս յօդուածը Թիֆլիսից գրուած լինէր, պարոն յօդուածագիրը կիմանար, որ ուսումնարանը այս տարի բացուեց սեպտեմբերին և ոչ թէ նոյեմբերին, և այդ էլ չնորհիւ իւր յարձակման առարկայ եղած անձնաւորութեան, որ չանձն առաւ ձրիաբար դասերը աւանդել ուսումնարանում մինչև ուսուցիչների հասնելը, որոնք խոչընդոյն պատճառով միայն ուշացել էին։

Հոգաբարձութիւնս այս քանի գլխաւոր կէտերին միայն նրա համար պատասխանեց, որ «Նոր-Դար»-ի ընթերցողները վատ գաղափար չկազմեն տեղիս հոգաբարձութեան և նրա ատենապետի վրայ։

Ի դիմաց Թիֆլիսի Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովի.

Քարտուղար՝ Տ. Ղ. Մասեհ. Պետրոսեանց.

Արձանագրութիւն № 31, 3 յունուար 1893 թ.։

ԿԻՐՁԱԻԱՆ գիւղ, (Հին-Նախիջևանի գաւառ.) 4 փետրուարի.—Կիրճաւանը, որ Օրդուբաթ քաղաքից 18 վերստ դէպի արևելք է գտնւում, մօտաւորապէս 70 ծուխ բնակիչ ունի, բացառապէս հայերից բազկացած. Գիւղացիք պարապում են երկրագործութեամբ, չերմապտղաբուծութեամբ, խաչնարածութեամբ, և այլն։ Կիրճաւանը գովուած է և բարձր է գտնում իւր շրջակայ գիւղերից կլիմայի կողմից, որովհետև ձորակի մէջ տեղաւորուած է. գիւղում կայ մի ջրվէժ մօտ 150 սաժ. բարձրութեամբ։ Կիրճաւանի հողը շատ առատ է, բայց ջուրը սակաւ։ Ջրանցք չինելու համար մինչև օրս պանազան փորձեր են եղել, բայց իզուր, որովհետև ժողովրդի մէջ միաբանութիւն չկայ։

Ինչպէս ասում է առածը, ամեն մէկն իւր գտակը գլխին սինդ է պահում երեսն գիտուն և խոհեմ երևակայելով։

գէնացի հռչակաւոր զօրապետ Աղբրաբէկ իւր կնոջ և երեխաների հետ։ Ըստ երևոյթին մեծ դժբաղդութիւնից յուզուած նա կարծես թէ չանկարծ փոխարկուեց։ Քաջ Ագդրուբալը մտնից վախեցաւ։ Աւերակներից դուրս գալով նա Սցխսիոնի ոտքերն ընկաւ և ծնկաչոք սկսեց կարեկցութիւն աղերսել Հենց որ Ագդրուբալի կինը այդ նկատեց՝ արհամարհանքով երեսը դարձրեց ամուսնուց և ծաղրական հեգնութեամբ խոչնդոտ տուեց նրան լաւ հոգալ իւր փրկութեան մասին և ինքը երեխաների հետ միասին բոցի մէջն ընկաւ։

Բայց հերոսներ որոնելու համար կարիք չկայ պատմութեան խորքերը խորասուզուել. ի պատիւ մեզ կարելի է ասել, որ մարդկային հասարակութիւնը նկատում է միշտ և կենդանի հերոսներին, որոնք կրթողական փրկարար և ազնուացնող նշանակութիւն ունեն մարդկային ամբոխի համար։

Պասկալ դէ Պասկին, Կորսիկայի հերոսը գենուացիների դէմ էր կռուում. բայց ոչ աջող. Նա շատ զինուորը կորցրեց և Սան-պեդրեգրինոյի մօտ կատարեալ պարտութիւն կրեց։ Էմմանուէլ Մարբա, ընտիր զօրապետներից մէկը, բայց որը պաշտօնանկ էր եղած և նրա տեղը տուել էին Պասկիեին, որ թնդանօթական զգացմունքներից զրկուած դաւաճանեց հայրենիքին և գենուացիների հետ միացաւ։ Պարտութիւնից յետոյ Պասկին Բոցիոյի վանքում բանտարկուած էր և մահուան էր սպասում, բայց նրան փրկեց իւր հակառակորդներից մէկի ազնիւ վճռականութիւնը, Թոմմաս Ջերվոնին Պասկիի անձնական

Կիրճաւանն ունի մի եկեղեցի, ս. Մարիամ Աստուածածնին անունով, կայ և մի 60-ամեայ քահանայ, բայց դեռ առայժմ։ Սակայն ցաւալի է, որ պատրաստութիւնները են տեսնւում նրան յաջորդ նշանակել՝ այդ կոչման անհամապատասխան մէկին. այդ մասին աշխատում է հենց ինքը, քահանան։ Ժողովուրդն էլ մեծ պատրաստ է ստորագրել մի թղթի, որը չէ կարդում և որի պատասխանատուութիւնը չէ նախատեսում։

Ցոյս ունենք, մեր բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը ուշադրութեան կառնէ այդ հանգամանքը։ Կիրճաւան գիւղը միանալով Բիւրեղու, Բեօղամ Թուրքաբնակ գիւղերի հետ մի մեծ թեմ է կազմում, բայց այդ գիւղերի կառավարութիւնը գտնւում է իւր կոչման անհամապատասխան անձի ձեռին. նրա համար յանցաւորն ու արդարը չի միում պատիժ կան»։

Կիրճաւան գիւղում եօթանասուն և հինգ թուին կար մի ուսումնարան իւր չիսունհատի աշակերտներով։ 77/78 ուս. տարուայ ուսուցիչը վանեցի էր և հենց այն ժամանակուանից փակուած են ուսումնարանների դռները։ Ուսումնարանի մասին ոչ քահանան և ոչ էլ տանուտէրն ոչ մտածում, մինչդեռ հասարակութեան գանգատն եկամուտի աղբիւրները, որոնք կարող էին ուսումնարանին յատկացուել, մի քանի հոգու գրպան են մտնում։ Իսկ այս տարի խոտերայի պատճառով օտարութիւնից վերադարձած մի քանի մարդիկ աշխատեցին, և դրանց շնորհիւ ընտրուեց հինգ հոգուց բաղկացած հոգաբարձութիւն, որի պարտականութիւնն է աշխատել, թէ աղբիւրներից և թէ նուիրատուութիւններով մի գումար հաւաքել, որի միջոցով կարելի լինի մօտիկ ապագայում կանոնաւոր ծխական զբաղոյց բանալ Կիրճաւան գիւղում։ Ցաւով ենք, որ հոգաբարձութիւնը կաշխատի կատարել՝ իւր յանձն առած պարտականութիւնը։

Սո. Տ.—Վահ.

Եւիւպ, 14 փետրուարի.— Պատուական «Նոր-Դար»-ի 24 համարում, քրոնիկոնի բաժնում Շուշուց մի լուր էր տպուած «իբր թէ փոլգանչինները այնտեղից Եւրոպա արբեշումի համար բերելու ժամանակ, Ճանապարհին, Ելիզաբէթպոլում աւազակները մի հակ գողանում են»։

Դորձի հանգամանքներին աւելի ծանօթ լինելով, կամենում եմ հաղորդել, թէ ինչ հետաքրքրութիւն ունեցաւ այդ աւազակութիւնը։

Անցքը պատահում է Կիօք-Թափա կոչուած տեղում, Ճանապարհից դուրս մի աննշան քարվանսարայում, ուր փոլգանչինների իջնելն արգելուած է։ Որովհետև արբեշումի համերն ապահովացուած են «Надежда» ընկերութեան մէջ, ուստի աւազակութեան համբաւը լսելով՝ կեցեալ ընկերութեան Եւրոպի գործակալը, պարոն Ն. Մելիք-Փաշայեանցն (որ միևնոյն ժամանակ Շուշու գործակալն է, համաձայն ընկերութեան հրահանգին, իսկոյն խրնդրագրով դիմում է Ադդամի պրիստաւին հարկաւոր միջոցները գործ դնելու և աւազակութեան մասին օրինաւոր արձանագրութիւն կազմելու։ Մինչ այս միևչ այն, այդ մասին լուր հասնելով Շուշու փոխ-գաւառապետ՝ Մելիք-Բէգլարեանցին, նա գալիս է Ադդամ, ուր ժողովւում են փոլգանչին, «Надежда» ընկերութեան Եւրոպի գործակալը, մի քանի ճանապարհորդներ, որոնք կողոպտուած փոլգանում են լինում։ Մանրամասն հարցմունքից յետոյ, պ. Մելիք-Բէգլարեանցը դիմում է Չիւանչիրի գաւառապետին, որ այդ միջոցին Եւլախում է լինում, և երկար խօսակցում է նրա հետ, ապա վերադառնալու ժամանակ հետամուտ լինելով, աւազակութեան հետքը բերում է Չիննու գիւղը, որ Չիւանչիրի գաւառումն է գտնւում ու այդպիսով պ. Մելիք-Բէգլարեանցը կարողանում է աւազակութեան հետքից ազատ կացուցանել իւր կառավարութեան յանձնուած գաւառը, սակայն նա դրանով չի բաւականանում և սկսում է Ադդամի ղարաբաղ բերել են Չիննու, բայց դեռ ոչինչ յայտնի չէ։

Ա. Աբշակունի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Թուրքաց Ծերունի մարշալ՝ Ալի-Նէզամ-փաշան, որ գերմանասէր է և երկար ժամանակ Ծառայել է Վիեննայի և Բերլինի օամանեան դեսպանատեղում երբև պետական գործակալ, նորերս մի քաղաքական բովանդակութեամբ մի հետաքրքիր տեղեկագիր է ներկայացրել Սուլթանին։ Այդ տեղեկագրի մէջ Ալի-Նէզամ-փաշան այժմեան քաղաքական դրութիւնը և պետութիւնների յարաբերութիւնները ուշադրութիւն շատ հանգամանքներ լուծելու համար հաշուի առնելով, Սուլթանին խորհուրդ է տալիս միանալու եռապետական դաշնակցութեան հետ, Գերմանիային է Ծերունի մարշալը Թիւրքիայի գոյութիւնը ապահոված համարում, Ֆրանսիային նա Թիւրքիայի համար կորած է համարում, քանի որ նա էլզաս-Լոթարինգի համար Գերմանիայի դէմ պատերազմ մղել է ուզում և Աբեւելքը բարձի Թողի է տալ։

—Լոնդոնից փետր. 17-ին «Petit Journal»-ին հեռագրում են, որ լորդ Չերչիլը հասարակական պատառում խօսելով Գլադստոնի մարդած իրլանդական բէլլ մասին «ասաց. հոմռուլը կարձանագրուի անգլիացոց պատմութեան մէջ իբրև պատմութիւն բէլլ մեծ գաւադրութեան, և Գլադստոնի անունը անխզելի կերպով այդ մեծ անուան հետ Գլադստոնին չի յաջողուի գիմագիծը կուսակցութիւնը ջնջել և Անգլիան չի ընդունիլ բէլլը»։

—Պոլսից փետր. 16-ին «Times»-ին հեռագրում են, որ այդ օրը գրաւոր հայացած է համաձայնութիւն փոքր Ասիայում երկաթուղի չինելու մասին հասարակական շինութեանց մինիստրի և Անատոլիայի երկաթուղային ընկերութեան ներկայացուցիչ՝ Կալի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

(Մ ե ք կ ե ա ն ք ի ց)

Ո—ուչիչ.—Դասական առարկաները. գիրք, քանոն, մատիտ, և այլն ինչ է գիրքը։

Աշակերտ. որը կարդում են։

Ուսուցիչ. իսկ ինչ է քանոնը։

Աշակերտ. որով ծեծում են։

Ուսուցիչ. ասա, որով գծում են։

Աշակերտ. այո, որով ծեծում են...

—

—Այս ինչ է պարոն Կ.—Դուք «Նոր-Դար» չէք կարդում։

—Ինչպէս չեմ կարդում, կարդում եմ, բայց այս տարի չեմ ստանում։

—Վա՛յ, ինչո՞ւ չէք ստանում։

—Է՛հ, եղբայր, ուղիղն ասեմ, Փիփլիսից ամեն օր պոստով նամակներ են գալիս, Թէ խնդրում ենք, ազատում ենք, Թողէք, մի ստանաք «Նոր-Դար»-ը այ շուտով...

—Ինչպէս Թէ շուտով,—դուք ուրիշի խելքով էք գործում։

—Չէ՛ եղբայր, ուղիղն ասեմ գաղէս գնաց, ճանճի պէս կպչում են, ես էլ ասեցի այս անգամ ձրի կարդամ, գոնէ ինձ հանգիստ կըթողնեն, ով է այդ չմարելուն ասածը լսում, միայն այն է, որ չատ ճանճացնում են։

—Այդ լաւ, բայց կարծում եմ, որ իւր խելքի տէր մարդը չպէտք է այդ գաւառաբարոյականներին լսէ։

—Ինչ անեմ, որ աներես են։

—Երեսդ շուռ տուր։

—

Երիքոյչները.—Անգլիական աշխարհագրական ընկերութեան անդամ Ֆրեդերիկ Չափսոնը մտադիր է դէպի հիւսիսային բեւեռը ուղևորութիւն կատարել։ Ամառս 10 հոգով կրգնայ Ֆրանց Իոզէֆի երկիրը, ուր կրձմեռէ հիւսիսային սահմանի վրայ, ուր հասած է եղել աւստրիական արշաւախումբը։ այնուհետև երկրորդ կէսը նշանակուած է 84 բարձրութեան վրայ, իսկ այնտեղից էլ յոյս ունի հասնելու երրորդ կայանը, որ բևեռից 200 մղոն հեռու է մնում։

—

Շերլոքյոնդը պատմում.—Սար Գերալդը Բրիւսէլում դասախօսութիւն էր անում։ Ունկնդիրներից մէկը չվուացրեց։ Դասախօսն առանց մի րոպէ չդիմելու դարձաւ չվուացնողի կողմը և նրան

Լիմանին էր, Չերվոնու մայրը տեղեկանալով, Թէ Բոլեոյում ինչ է կատարուում, պատուիրեց երիտասարդին պինաւորուել։ «Իսկ իմ կրած վիրաւորանքը, բացականչեց որդին. «Ձո անպատութիւնը քեզ նախատինք չէ բերում», հակաճառեց հերոսուհին, «ազատութիւնը կոչում է իւր ախոյեանի հետ Գնա, ասա Թէ ոչ ես կը նզովեմ այն կոմիը, որով քեզ սնուցել եմ»։ Չերվոնին այլևս չտատանուեց. նա մի խումբ քաջերի հետ յարձակուեց պաշարողների վրայ՝ և Պաոլին վրկուած էր Պատերազմից յետոյ, վերջինս կամեցաւ իւր ազատարարին տեսնել։ Բայց ատելութեանը հաւատարմութիւն ուխտած և իւր պարտքը ճշդութեամբ կատարած լինելով՝ Չերվոնին առանց ուշանալու քաշուեց հեռացաւ։

Հռոմէական հասարակապետութեանը հենց իւր սկզբնաւորութեան առաջին օրերից վիճակուած էր խիստ պատերազմներ մղել երկրի ներսը և դուրսը՝ իւր անկախ գոյութիւնը պաշտպանելու համար։ Առաջին հիւպատոս Բրուտոսի և Կոլլատինի օրերով հռոմայեցի ականաւոր ընտանիքների երիտասարդները դաւադրութիւն էին կազմել, որպէս զի Հռոմում՝ աքսորուած կայսրների կառավարութիւնը վերահաստատուի։ Ներ դաւադրութիւնը ակնյայտնի դարձաւ՝ Բրուտոս հիւպատոսը ցաւօք իմացաւ, որ յանցաւորների մէջ կան և իւր երկու որդիքը։ Հայրենիքի հայրը իւր ծննդական զգացմունքը զսպեց—Հռոմն ակնառու էր, Թէ ինչպէս հայրն իւր երկու հարազատներին մահուան դատապարտեց։

Ընդհանրապէս վաղեմի դարերը հերոսներով և դիւցազներով առատ էին, և եթէ երկրագոյն քննադատ պատմագիրը անկարող է աւանդութիւններին և առասպելներին վստահութեամբ վերաբերուել, այնուամենայնիւ նա պիտի խոստովանուի դիւցազնական հերոսութիւնների գէթ մի մասի խիստ Թիւնը, որով լի է հռչակաւոր և մեծ ազգերից մէկի պատմութիւնը։

Պօրսենան Հռոմայեցիներին սպառնալով՝ Տիբերի աջ ափին ոտքեց։ Մի անգամ հռոմայեցիները գետի միւս ափն անցան, Թիւնամուն վռնդելու նպատակով, բայց պարտութիւն կրեցին և ստիպուած էին քաղաք վերադառնալ։ Բայց չէ որ նրանց կը հետեւէին Էտրուսները և քաղաքը կարշաւէլին, եթէ Հորացիոս Կոկլէս հերոսը, միայն երկու ընկերով կամուրջը չքաշուէր, եթէ Հորացիոս Կոկլէսի տունը չէր բնակուում՝ արժանաւոր քաղաքացու համար։

Մի ուրիշ անգամ էլ միևնոյն է արուեստը պաշարել էին Հռոմը. Մուշիոս Սչեւոլա Տերակոյսից Թոյլտուութիւն խնդրեց, որ փորձէ Էտրուսների Թագաւոր Պորսենային սպանել։ Մուցիոսը Թիւնամու բանակն անցաւ, իսկ յետոյ և արքայական վրանը մտաւ, բայց, վեյոլեան զգեստից խափուած, արքայի փոխարէն չքեզ հանուած պատահականին սպանեց։ Պորսենա հռոմայեցի երիտասարդի քաջութիւնից վախեցած, որ Թիւնամու ամբողջ բանակն էր անցել, նախապէս գիտենալով, որ եթէ անաջողութիւն ունենալու լինի, իրեն մահ է սպառնում, կամեցաւ ստիպել նրան, որ իւր քաղաքակիցներին մտանէ, ենթադրելով, Թէ իւր համաձակ մտադրութիւնը Նա միայնակ չէր կարող իրագործել։ Թագաւորը կամեցաւ Մուցիոսից ամեն ինչ տեղեկանալ, սպառնալով նրան տանջանքների ենթարկել։ Այն ժամանակ Հռոմայեցին կրակ նկատելով անօթի մէջ, որ զոհասիրութեան էր ծառայում, իւր աջ բազուկը մեկնեց դէպի կրակը և այնքան ժամանակ պահեց կրակի վրայ, մինչև որ ձեռքն իսպառ այրուեց, «Ահա Թէ հռոմայեցիները ինչ են», ասաց նաև «Ես դաշնակիցներ չունիմ, և ոչ ոք ինձ հետ չէ ուխտել քեզ սպանելու։ Մեզանից իւրաքանչիւր ոք էլ կվարուի այնպէս, ինչպէս ես վարուեցայ և ինչ որ այժմ կատարեցի»։

Պորսենան չվստահացաւ երիտասարդին սպանել, և հերոսների քաղաքը պաշարումից ազատեց։

Բնաւորութեան քաջութիւնը և ապրումի արժանաւոր քաջագործութիւնները մեզ հետ են ծնւում և կարող են նոյն իսկ պատանեկան հասակում երևան գալ։ Ուզուչչիոնէ դա Ֆաջիոլան դեռ երիտասարդութեան ժամանակ վտանգներն արհամարհելով սկսում է քաղաքային վէճերին մի ջամսել։ Մի անգամ ամբոխից մի ծերունի նկատեց նրան. «Դու էլ քաջ պատանի, հռետորութեան ամբիոնին ես ձգտում»։ Վերջինս արժանավայել կերպով պատասխանեց. «Ես կամենում եմ Թոյլին և ազնուին ծառայել և զօրեղի հերանները պաշտպանել»։ Այդ երիտասարդը վերջը գերլինելի զօրագնդերի ամենաքաջ զօրապետներից մէկը դարձաւ։ Մի անգամ միայն պատահեց, որ նրա զինուորները երկիւղ կրեցին՝ և այն ժամանակ նա ասաց նրանց. «Թող կոչեն փոքր ոգինները և Թոյլերը, նրանք լինէ պէտք չեն, եթէ լինէ միայն հարիւր քաջ տղայք հաւատարիմ կը մնան, ես ընդունակ եմ իմ յաղթութիւն տանելու»։ Այդ բառերը, ասում է նրա կենսագիրը, այնպիսի ոգևորութիւն ներշնչեցին զինուորներին, որ նրանք Թշնամու գնդի վրայ յարձակում գործելով՝ կատարեալ ջարդ տուին նրան։

Սէթ մենք զինուորականների չբաւականից գիտնականների համեստ աշխարհն իջնենք՝ այստեղ ևս քաջութեան, հայրենասիրութեան, բանականութեան և գիտութեան մէջ կատարեալ ներդաշնակութիւն կը նկատենք։

Բերնատէն Տելիչին դեռ երիտասարդութեան օրով այն եզրակացութեան հասաւ, Թէ Արիստոտէլի փիլիսոփայութիւնը շատ տեղ իրականութեան դէմ մեղանչում է, և միտք չդարձաւ հին աւերակների վրայ նոր շինութիւն կառուցանելու։ Այդ մասին նա սկսում էր խօսել փիլիսոփայ պրոֆեսորների հետ. բայց միայն ծաղրի առարկայ էր դառնում. նրանք ոչ մի կերպ չէին երևակայում, Թէ Արիստոտէլը կարող էր սխալուել. չէ որ 29 դար շարունակ բոլոր փիլիսոփաները նրան կուրօրէն հպատակում էին։ Գիանական Ամալտէյը մի անգամ նկատեց Տելեչինին. «Որդի, Արիստոտելը ոչ Թէ մարդ է, այլ Աստուած, կրյանդգնիս արդեօք դու անմահների դէմ պատերազմ հրատարակել։ Սակայն Տելեչին այդ խօսքերին ուշադրութիւն չդարձրեց. հպարտօրէն գործին ձեռնամուխ եղաւ և այնպէս ուղղեց Արիստոտէլի սխալները, որ բոլոր Պադուայի գիտնականներին զարմացրեց։

Միայն Տելեչին չէր, որ ստիպուած էր ժամանակակից գիտնականների նախապաշարմունքների դէմ մաքառել։ Գիտութեան աշխարհի բոլոր յեղափոխիչները նախ և առաջ գործունէութեան ասպարէզը մարմնացած հայեացքներից են մաքրում, յաղթում են խոչընդոտները և հազարաւոր դէպքերում քաջութիւն, արտասովոր քաջութիւն արտայայտում։ Յիշել ենք Գալիլէյի սլատմութիւնը, որը միայն երեն յատուկ պարզ վեհութեամբ ասաց. «Մտածեցէք, որ գիտութեան մէջ հազարաւոր հեղինակութիւն ունեցող անձանց կարծիքը մի անյայտ ամենահամեստ եզրակացութեան արժէքը չունի»։

Ագ. Թարխան.

առաջարկեց ամբիոն բարձրանալ՝ իբր հետ միասին շվուացնելու համար Թուրս եկաւ մէկը։ Եւ ահա գասախօսն ու ունկնդիրը սկսեցին բեմից միասին շվուացնել։

Ա՜հ, քեզ գուարճութիւն։

—

Խուրիւներէն հաւաստուած. — Զինվագոյն քաղաքային վարչութիւնը ի նկատի ունենալով, որ աշխարհահանդէս իրենց այցելութեամբ պատուելու հաճութիւնը կունենան նաև զանազան՝ ուրիշների հարստութեան սերտաղներ, ցուցահանդէսի այցելուների գրպանի ապահովութեան համար հրաւիրել է եւրոպական զանազան քաղաքներից 400-ի չափ յայտնի խուզարկուներ։ Պէտք է որ չատ հետաքրքիր ժողովածու կազմելիս լինեն այդ խուզարկուները։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՅԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրուարի. — Պետական խորհուրդը չուտով քննութեան կառնի արդարադատութեան մինիստրի՝ աքսորի ուղարկուած կանանց վերաբերութեամբ մարմնի պատժի վերացման նախագիծը։ Ֆինանսների մինիստրութիւնը՝ վերջնականապէս մշակել և մտցրել է պետական խորհուրդը մի օրինագիծ՝ գիւղական բանկերի կանոնադրութեան փոփոխութեան մասին։

ԱԹԷՆՔ. Սեմի կղզու վրայ անկարգութիւններ են տեղի ունեցել. Թուրքերը սպանել են եղեցին, ծեծել և ջարդել են մի քանի նշանաւոր տեղացիներին, դրանց Թուրմ և աւստրիական հիւպատոսին և իտալական կանցլերին։ Այս մասին պատգամաւորները ժողովում արած հարցմունքին, Տրիկուպիսը չբացատրելով եղելութիւնը, որոշ պատասխան չտուաւ։

ՎԵՆՆԱ, Ռայխստագի այսօրուայ նիստում Լեհացի պատգամաւոր Լեվիցկին կրկնեց լեհացիների կլուբի անցեալ տարուայ յայտագիրը. գերմանական կառավարութիւնը չպէտք է Ռուսիայի հետ այնպիսի առևրական պայմանագիր կապէ, որից կարող էին ջլատուել այն օգուտները, որոնք արուած են Աւստրիային Գերմանիայի հետ ունեցած առևտրական պայմանագրով։ Այդ պայմանների կատարումից կըլինի կասուած լեհական կլուբի գործելու եղանակը առաջիկայում Բալկան-պետութիւնների հետ առևտրական-քաղաքական բանակցութիւնների ժամանակ։

ԲԵՐԼԻՆ. Բրանդէնբուրգի գաւառական ժողովի այսօրայ հանդիսաւոր հայկերոյթին Վիլհելմ Կայսրը խօսեց. «Մեր ժամանակը, ասաց կայսրը, սիրում է անցեալով զբաղուելու և անցեալը համեմատելու ներկայի հետ ի վնաս ներկայի։ Նա ով որ կարող է քննական կանայք ձգել այն փառաւոր անցեայի վրայ, որ մերն է, լաւ կանէ եթէ նրանից խրատ առնէ և իմանայ, որ չըպէտք է անձնատուր լինի անօգուտ քննադատութիւնների, այլ պէտք է զբաղուի կենսատու և յուսալ ծիծաղ աշխատութեամբ և առաջ ընթանայ այն ճանապարհով, ինչ ճանապարհով առաջ գնացել են։

Վիլհելմ Ա. Կայսրի փառաւոր պատկերը և նրա մեծ աջողութիւնները գոյութիւն ստացան չնորհիւ այն անյողդողդ հաւատի, որ նա տածում էր դէպի իւր կոչումը և իւր պարտքը կատարելու համար արած եռանդագին ջանքի։

Այդ աւանդութիւնների մէջ ես մեծացել և կրթուել եմ ստացել. չեմ թագցնում ինքս ինձ, որ միակերպ գոհացնել ամենքին և իւրաքանչիւրին ինձ երբէք չի յաջողուել, ինչպէս և այն որ ամենքին միակերպ չեմ կարող բաղտաւորացնել, բայց և այնպէս յոյս ունեմ այնպիսի պայմանները ստեղծելու, որոնց մէջ կարող են գոհ լինել նրանք, որոնք կամենում են գոհ լինել։ Իմ յոյսերս դարձրած են ներքուստ՝ հայրենիքի մեծութեան և հաստատութեան գործին, իսկ արտաքուստ՝ դէպի նրա վայելած յարգանքին, և այն ժամանակ մենք հանգիստ կարող ենք ասել. «մենք գերմանացիներս վախենում ենք աստուածանից միայն և աշխարհումս սրբիչ էլ ոչ ոքից»։

ԲԵԼԳՐԱԴ. Մելանի խնդրելով կրօնական ժողովը ապահարազանը չըկատարուած ձանաչեց և օրհնեց Թագաւորի ծնողներին ամուսնութեան կենակցութեան համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրուարի. — Պարսկաստանում Թոլերան Թուլանալով ներքին գործերի մինիստրը կարգադրել է Թոյլատրել Պարսկաստանից ապելսինի ներմուծումը Ռուսիա։

Լուսաւորութեան մինիստրութիւնը ծանուցանում է, որ աշնան Հոմում կը գումարուի բժշկական տասն և մէկ երորդ կօնգրէսը։

ԼՕՆԴՈՆ. Չինաստանը Անգլիայի հետ բանակցութիւն է սկսել Պամիրի և Պեքինի միջև հեռագրական հաղորդակցութիւն հաստատելու մասին։

ԲՈՄԲԷՅԻ. Դոկտոր Րոբերտսոնի անգլիական առաքելութիւնը յունուարի 29-ին հասել է Զիտրալ։

Խմբագիր—հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԻԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Յայտնում ենք է գիտութիւն ընդհանրութեան, որ ոչ մասնաւոր անձի և ոչ էլ որ և է մի հաստատութեան կամ ընկերութեան յայտարարութիւն կամ ծանուցումն չէի հրատարակել չենք կարող։ Յայտարարութիւն կամ ծանուցումն համարում ենք զանազան ընկերութիւնների, հաստատութիւնների, երեցփոխանական և այլ հաշիւները, տեղեկագրութիւնները և ծանուցմունները, նոյնպէս և զանազան նուիրատուութիւնների ցուցակները և այդ մասին հրապարակով արած չնորհակալութիւնները։

Այն ամենը, որ մեզ ուղարկում են տպագրութեան տալու համար և յայտարարութեան բնաւորութիւն ունին, բայց նամակի կամ յօդուածի ձև՝ դրանք կըհրատարակուեն տեղեկատուի բաժնում իբրև յայտարարութիւն՝ սահմանած վճարով։

—

Հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը պատիւ ունի ի տեղեկութիւն ընդհանրութեան յայտնել որ Թիֆլիսեցի 2-րդ գիլդի՝ վաճառական մեծ. պ. Գրիգոր Սառաջեան (Սառաջ-Թուրգէնեան) նուիրած լինելով ընկերութեանս 300 ր., խորհուրդը կանոնագրութեան համաձայն ընդունել է նրան մշտական անդամ բարեգործական ընկերութեան, տալով դրա համար սահմանուած պատուաճառը վկայական և յայտնելով պարոնին չընորհակալութիւն։

Խորհուրդը նոյնպէս չնորհակալութիւն է յայտնում և Թիֆլիսեցի եղբայրց Կարապետ և Բէգլար Վարդանեաններին, որոնք ևս ելբեցին ընկերութեանս 100 ր. ի լեչասակ իրենց հանգուցեալ եղբօր Կոնի Վարդանեանի և Աստրախանցի պ. Կիրայեանին, 25 ր. որ դա նուիրել է Սաչխէր վերաթող հայ գիւղում դպրոց բանալու համար։

Ի ուշադրութիւն ընդհանուր ընդհերութեան

Նահանգապետին Բաքուում, Օրհատոյի եւ Կ. Պոլսի միջև։

ԲԱՔՈՒՈՒՄ ԶՐՑԸ Ե ՓՆՈՒՄ.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին ընդհանուր ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

ԲԱՔՈՒՄ ՀԱՍՆՈՒՄ Ե.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։ Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

Պոստային եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երթեւեկութիւն Փոթիի, Բաթումի եւ Օզիսայի միջև։

ՓՈԹԻ ՀԱՍՆՈՒՄ Ե.

Պոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

ՓՈԹԻՑ ԴՈՒՐՍ Ե ՓՆՈՒՄ.

Պոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ձանապարհին գանուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Պոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթումն։

—

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումի երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Ձանապարհին տեղուած նաւահանգիստները։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ, ԸՆԿԵՐ, ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամներին, որ առաջիկայ կիրակի, ամսոյս 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, քաղ. խորհրդի գահլիճում լինելու է ընդհանուր ժողովի շարունակութիւնը։

(406) 2—2

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ
ՄԱՏԻԿՕ ԿԱՊՍԻՒԼ ԵԻ Ը.
Capsles au Matico)
Պարիզի գեղագործների — Թոյլատրուած է Ռուսիայում։

Սոյն կապսիւլները պատրաստուած են Մատիկոի և Կոպայ Բալզամի էսէնցիայից։ Նրանք պատած լինելով մածուցէ կեղևով ոչ մի վատ համ կամ հոտ չեն ունենում։

Պահեստն Ռուսիայի գլխ. գեղատներում։

(M.) 18—5

!!ԶԳՈՒՇԱՑԵՔ ԿԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ!!

Անողջապահական

ՈՍԿԵՔՈՐԱԿԻ-ՏՈՊՐԻՆԻ ՕՁԱՓ

Դէղ-գործ

Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ

ոչնչացնում է մաւնները, արեւից ապրուածքը, դէղձն քծերը, կնճռները շրթներները և ազդում է աւելորդ քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օձառ։

տորթի գինը՝ 50 կ., ½ կտորինը՝ 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ բոլոր Ռուսիայի համար Կ. Ի. ՖԵՐՐԷՅՆԻ մօտ Մոսկուայում։ ԴԵՊՈՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ դեղատնային ապրանքների առևտրի ընկերութեան Մուրզինովի, պ. պ. Պոպովի և Ազմուքովի դեղատներում։

(M.) 21—17.

Իմ աշխատութիւններս մեծ մասամբ սպառուած են. մնացեալները հետևեալներն են, որ այսուհետև կարելի է ստանալ միայն ինձանից.

ՀԱՑԻ ԽՆԻՐ	— 80 կ.
ՇԱՀԷՆ	1 ր.
ՏՇՑԵՐ	1—20 կ.
ԲՂԻԽ	1—20 կ.
ՍԿԻԶՐՆ ԵՐԿԱՆՑ	1—20 կ.
Փոստի ծախք իւրաքանչիւր գրքին	10 կ.

Վերջին աշխատութիւնս նոր լոյս տեսաւ տպարանից և շուտով կուղարկուի պ. պ. բաժանորդներին, ուստի խնդրեմ այն յարգոյ պարոններին, որոնց մօտ կան բաժանորդագրութերթեր շտապեն վերադարձնել։

Հասցէս՝ Թիֆլիս, Ներսիսեան դպրանոց. Тифлисъ Армянская Семенарія.

Պերճ Պռօշեանց.

(Խ.) 20—1

(M.) 52—26

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐՈՆԻ ԱԻԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ խնդրում է պ. պ. անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովի, որ տեղի կունենայ շաբաթ 6 փետրուարի 20-ին՝ քննելու աւագների մի որոշումը՝ որով անդամներից մէկի (Յ. Դ. Ա.) երեք ամիս ժամանակով ժողովրան յաճախելը է արգելւում (50 և 1-ին մ. 4 ՝ ից. ժողով. կանոն.) և կանդիտաներ ընդունելու քուէարկութեան համար։

(205) 3—3

M. 36—30

BATEAUX A VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET C^IE

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵԻ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մանում է, Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինովն են։

Բաթումից մեկնում է՝

Չորեք. 10/22 Փետ.	շոգենաւ.	«Արմենիա»	Նաւապետ՝	Տիրալ
» 24 Փետ. և 8 Մարտ	»	Անատօլիա	»	Գարբիգ
» 10/22 Փետ.	»	«Սերկասէյ»	»	Բօշէ
» 24 Մարտ. 5 Ապրիլի	»	«Մինգրէլիա»	»	Ժիրօֆէն

և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Տեղեկութիւնները ստանալ ցանկացողները, թող բարեհաճեն դիմել հեռևեալ գործակալներին։

Բաթումում—պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբերեժնայա։

Թիֆլիսում պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Հայոց փողոց, տուն նախկին գեներալ Տէր-Աստուրեանցի.

Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբեակինսկայա հրապարակ։

Նովորոսիսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։

(203) 10—5.

Дозволено цензурою. Тифлисъ 19-го Февраля 1893 г. Տպարան «Կաւկազ»-ի Типографія „Кавказъ“ Гол. пр. домъ Читахова.